ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի մարտի 27-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/01-2» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի հունիսի 17-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագրի 08.05.2024թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ում «օգոստոս» և «սեպտեմբեր» սյունակներում տեխնիկական վրիպակի առկայություն:

Փոփոխության նկարագրություն՝

Համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ում «օգոստոս» և «սեպտեմբեր» սյունակներում նշված «33150000» թվերը փոխարինվել են «39000000» թվերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 կետ

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

27.03.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/01-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 17 » « 06 » 2024թ.

ք. Երևան

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՈՒյուտ Սենթր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 27.03.2024թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/01-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 08.05.2024թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ում «օգոստոս» և «սեպտեմբեր» սյունակներում առկա տեխնիկական վրիպակը.

1.1.Համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ում «օգոստոս» և «սեպտեմբեր» սյունակներում նշված «33150000» թվերը փոխարինել «39000000» թվերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՈՒյուտ Սենթր» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գ.Նժդեհ 3
ՀՎՀՀ՝ 06108036
Հ/Հ՝ 1570071934910100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Լ. Հարությունյան

(ստորագրություն)
ՍՊԸ «ՈՒՅՈՒՏ ՍԵՆԹՐ»
"ՍՊԸ "ՈՒՅՈՒՏ ՍԵՆԹՐ"
"UYUT CENTR"
06108036